տում է օրէնքի լծից և Ս. Հոգու սրբանուէր գործիք շինում, որին համար վայելքներ են ամբողջ աշխարհի կայքն ու գոյքը։

Խոնարհութիւնը մարդուն հրեշտակ է դարձնում, ամբարտաւանութիւնը — հրեշտակին սատանայ։

Դու Հայ ժողովուրդ, միթէ կուզես ամբարտաւանութեամբ հպարտանալ։

Ո՜հ, ոչ. դու կխոնարհուես քո Արարչին առաջ, որպէս զի բարձրանաս դէպի նորա փառքը։

Ա. ՏԷՐ-ՄԻՔԷԼԵԱՆ.

ԱԶՆԻՒ ԳՈՐԾՈՂԻՆ։

(1893 թ. Դ. ՃԵՄԱՐԱՆԻ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ)

ԿԱՐԴԱՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՌԱՋ.

—

Թո՛ղ Ծանրանայ կեանքի խաչն ուսիդ,
Հէք ժողովրդի հարազատ Դու Հայր,
Թո՛ղ սև-սև վշտեր կուտակուին սրտիդ,
Ճնշէ անխընայ քեզ պատող խաւար։

Թո՛ղ կեանքի հոսանքն որպէս մի տաշեղ
Քեզ տարուբերէ իւր ալիքներում։
Թո՛ղ բիրտ ամբոխը մռընչէ ահեղ,
Ըսպառնայ քեզ ահ, սոսկալի անկում։

Մի՛ յուսահատուիր, ով Հայր ցաւատանջ,
Սուրբ է քո ուխտը, վըսեմ քո կոչում—
Ինչպէս անվեհեր մի զինուոր Դու քաջ
Անվրհատ բռնիր դրոշը քո ձեռքում։

Քայլիր անսասան քո ընտրած ուղին,
Դու, ճշմարտութեան հրզօր ջատագով,
Թէև դժնդակ փուշն է անմեկին
Անտեղ սրփռուած մահաբեր թոյնով։

Քո քարոզած սուրբ, վեհ գաղափարներ
Պիտ առաջնորդին սիրած հայերիդ
Դէպի փառաւոր, դէպի կենսաբեր
Լոյսը շողշողուն, ուղին ճշմարիտ։

Եւ կը գայ մի օր, երբ ընդարմացած
Հէք ժողովուրդը դառն արցունքով
Կըզգայ իր սխալ և ուշքի եկած
Կը վառէ արձանդ ծաղկէ փունջերով։

Նա կը ճանաչէ անկեղծ, անկաշառ
Իւր բարերարին, իւր ազնիւ գործչին,
Որ չը զըլացաւ իւր կեանքն ոսկեվառ
Զոհել իւր սիրած, դգուած խեղճ ազգին։

ՍԱՄ. ԴԱՒԹԵԱՆ.

Աշ. Դ. ճեմարանի Զ. դաս.։

Ս. Էջմիածին
1893. հոկ. 5.



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԵՒՐՈՊԱՑԻՆԵՐԻ ԴՊՐՈՑԱՎԱՐՈՒԹԻՒՆ

(ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ).

—

Անմահ յիշատակի արժանի Գէորգ Դ. մեծագործ Հայրապետի հրամանով, յայտնի է, որ ես Եւրոպայ գնացի մանկավարժութիւն, դպրոցավարութիւն ուսումնասիրելու Գէորգեան ճեմարանի մէջ դասախօսելու համար։ Բայց Եւրոպայում գտնուած միջոցիս ճեմարանի հանգամանքները բոլորովին փոխուեցան։ Ուսումնասիրութեանս արդիւնքը և նկատողութիւններս մի գրքոյկ կազմեցին,

որ զանազան ժամանակում, ամիսի կարգի բերելուց յետոյ, ցանկացայ հրատարակել, բայց մի երկու անգամ հաղիւ «Մանկավարժանոց» ամսագրումն հատուածներ հրատարակեցի։ Այս նկատողութիւններս, ընթերցողները կտեսնեն, մի տեսակ մանկավարժական զրոյցներ է. աչքի առաջ կատարուող, եթէ կարելի է ասել, կենդանի դպրոցավարութիւն։ Ամբողջ օրեր զանազան աշխարհներում և քաղաքներում դպրոցների մէջ անցուցանելով, գրքոյկիս մէջ էի մուծանում տեսածս, լսածս և իմացածս։ Այժմ էլ ահա առաջարկում եմ նոյն նկատողութիւնների մի հատուած, փափագելով ի հարկէ, որ «Արարատի» մէջ զուր տեղ բռնած չլինէր այս հատուածը։

Փարիզում գնացի հռչակաւոր «école Monge» (Մոնժ ուսումնարան) տեսնելու։ Ուսումնարանը գտնւում է քաղաքի ծայրում Մալէրբ ծառուղու մօտ։ Բէլժիքի Մոնս քաղաքի վարժապետանոցից յետոյ այսպիսի հրաշալի շինութիւն ամենայն յարմարութիւններով, և ոչ մին տեսած էի։ Մոնժ ուսումնարանն հիմնած է մասնաւոր ընկերութիւն և Մոնժ անուն տուած են հիմնադիրներն։ Պոլիտէքնիկական (բազմարուեստական) ուսումնարանի նախկին աշակերտները, բազմարուեստական վարժարանի հիմնադիրն երևելի Մոնժ մաթեմատիկոսն էր, որի անունով և կոչուած է ուսումնարանը։ Ֆրանսիայում և այնուհետև Եւրոպայում լաւ իմաստուն սովորութիւն կայ. իրանց երևելի մարդիկների անուններն կրկնել, չմոռանալ։ Վարժարաններ, ծառուղիներ, փողոցներ, հրապարակներ, հիւրանոցներ, գերեզմանոցներ և այլն, երևելի մարդիկների անուններով են կոչւում։ բացի սեփական արձաններից։ Վերատեսուչն է պ. Գոդար, (Godare) որը պաշտօնապէս մանկավարժութիւն ուսանողների մէջ միայն անուանի անձն չէ, նոյնպէս օրէնքի տաւեր պաշտող, ձևականութեան երկրպագու մարդ չէ, բայց աշակերտներին հոգի ներշնչող, աշակերտներին շատ սիրելի անձն է։ Աշակերտներին իբրև անկեղծ և սիրող էակներին միշտ և ամեն տեղ ատելի են և վնասակար ձևապաշտ կուռքեր։ Քարտուղարն է պ. Հէյրան (Heirand), որ և ցոյց տուեց ինձ ուսումնարանը։ Դառուղու վրայ շինում էր նոր մեծ շինութիւն մեծ աշակերտների համար, որոնք ամեն կերպով և բոլորովին բաժանուած կլինին միւսներից։ Աշակերտական վճարը թանկ է, ուստի միայն հարուստ վաճառականների զաւակներ կարողանում են աշակերտ լինել։ Արիստոկրատների (մեծատունների) զաւակները ժէզվիտների մեծ մասամբ գիշերօթիկ դպրոցների մէջ են կրթւում։ Մոնժ ուսումնարանի մէջ 700 աշակերտ են. 200 գիշերօթիկ, մնացածն մեծ մասամբ կիսաթոշակ, այսինքն մնում են ուսումնարանում առաւօտից մինչև երեկոյ, այնտեղ ճաշելով։ Ուսումնարանն իր հանրակառքեր (օմնիբուս) ունի 14 հատ, որոնք առաւօտեան և երեկոյեան բերում—տանում են աշակերտներին իրանց տներ։ Սորա համար սահմանուած է առանձին վճար—տարեկան 300 ֆրանկ (մօտ 100 ր.)։ Վեցամեայ մինչև քսանամեայ աշակերտներ կան։ Վեցամեայ մինչև իններամեայ աշակերտների դասատուներ կանայք են, որ շատ ընտիր և իմաստուն գործ է։ Մանուկներին օգտաւէտ լինելու միակ պայմանը սէրը է. ո՞վ է կարող մանուկներին կանանցից աւելի սիրել։ Մոնժ ուսումնարանի ուսուցիչների ցուցակն առաջ բերելն աւելորդ է. այսքան կասեմ, որ նոքա ամենքն, ինչպէս նշանակուած է ցուցակում, ոչ միայն առաջնակարգ արտօնեալ ուսուցիչներ են (ապահով ռոճիկներ ստանալով). այլ արտօնեալների մէջ ընտրեալներ են։ Մոնժի դասատուները ոչ թէ միայն դասաւանդութեան մասին մտածելու պարտաւորուած են, այլ առաւելապէս աշակերտներին զարգացնելու և առաջադիմութեան, կատարելագործութեան ճանապարհն էլ սովորեցնելու։ Ուստի կան այնպիսի ուսուցիչներ, որոնց քանի մի իմաստալի խոս-

քերն աւելի նշանակութիւն և արժէք ունին աշակերտների մտաւորական և բարոյական առաջադիմութեան համար, քան թէ մի ուրիշի աւելորդաբան ամբողջ տաղտկալի դասախօսութիւնը։ Մօնժ ուսումնարանի ուսուցչական խումբը 70 ընտիր, բանիմաց, զարգացած և աշակերտների օգտին նուիրուած անձներից է բաղկացած։ Դժուար թէ նոցանից մին վարձկան լինի. պ. Գօդար անսիրտ և անհոգի անձներին Մօնժ ուսումնարանում պաշտօնեայ չէ ընդունում։ Երկու ամբողջ օր Մօնժի մէջ անցուցանելով և շարունակ դիտելով աշակերտներին և ուսուցիչներին դասարաններում և թէ դուրսը, զարմանալի բարեկամական և խորին յարգանքի յարաբերութիւններ տեսայ աշակերտների կողմից դէպի իրանց վերատեսուչն և դասատուները. ամեն քայլափոխում երևում էր որ աշակերտների համար շատ թանկագին էին իրանց ուսուցիչներն։ Ամենեղ ուսուցիչն այնքան աւելի արժէք ունի վարչութեան աչքում, որքան աւելի յարգելի և սիրելի է աշակերտներին։ Իւրաքանչիւր դասարանն ունի իր դասատիարակը, որը միշտ դասարանի հետ է ամեն տեղ, դասի միջոցին միայն ազատ է։ Ուսումնարանի 700 աշակերտ 35 դասարանի մէջ են բաժանուած։

Ուսումնարան մտնելիս նախ հանրակառքերի (օմնիբուսների) բակ ես մտնում, որտեղից անցնում ես parloir – խօսարան՝ մի ընդարձակ շատ յարմարութեամբ կահաւորուած սենեակ, որի մէջ աշակերտները տեսնում են և խօսակցում են իրանց այցելող ծնողների հետ։ Խօսարան – սենեակը թատերասրահի ձև ունի։ Հինգշաբթի օրերն աշակերտներն ազատ են։ Վարչութիւնն աշակերտներին առաւել քաջ ծանօթացնելու համար մատենագիրների հետ՝ վարձած ունի մշտապէս դերասաններ։ (Որա համար տարին 8000 ֆրանկ է ծախսում)։ 3 ժամին գալիս են դերասանները, հինգշաբթի օրերը։ Նախ ուսուցիչը բացատրում է հատուածներ, յետոյ դերասանները ներկայացնում են նոյն հատուածներն աշակերտների ներկայութեամբ ի հարկէ։ Քարտուղարն ինձ հրաւիրեց հետևեալ օր գալ այս վարժութեանը ներկայ լինել։ Այս առաջին բակից միջանցքով, որտեղ պատի վրա Եւրոպայի բոլոր երկաթուղիների երևելի քարտէզ կայ, անցնում ես երկրորդ ընդարձակ հիանալի բակը, որի առաստաղը ծածկուած է ապակիներով, իսկ յատակը ասֆալտով։ Այս բակի մէջտեղ փոքր վանդակ կայ, որով բաժանւում են ուսումնարանի աշակերտների բաժանմունքը։ Ընդհանրապէս Ֆոանսիայում շատ են բաժանում և հեռացնում միմեանցից աշակերտներին (մեծերին փոքրերից) ամենայն անկարգութեան առաջն առնելու համար։

Ուսումնարանը չորս յարկանի է. մի յարկ գետնի տակ, մի յարկ գետնի վրա, առաջին յարկ և վերին յարկ։ Գետնի վրա գտնուած յարկում ծածկուած բակի կողմից և առաջին յարկում, իր լայն պատշգամով, բոլոր շուրջը դասարաններ են։ Վերին յարկում ննջարաններ են։ Գետնի տակ սեղանատուն և խոհանոցներ են։ Վերատեսչի բնակարանը ծառուղու վրա է մուտքի կողմից, իսկ պաշտօնեաների բնակարանները վերատեսչի հանդէպ կողմից են բաց բակի մէջ։ Շինութեան միւս կողմից կայ բաց բակ աւազով ծածկուած և պարտէզ, դարձեալ վանդակապատով բաժանուած։ Այս բակի ծայրում արտաքնոցներ կան. մի նախապատ, սորա ետև նրբանցք և բազմաթիւ խցիկներ փոքր մարդասի դռներով, բոլորակ ամառ նստելու, նոյն նախապատի մի ծայրում ևս բաց միզարաններ։ Սեղանատունը գետնի տակի յարկումն է. մի ընդարձակ դահլիճ, մարմարիոն սեղաններով երկու կողմից, փայտեայ նստարաններ և ոտներ դնելու տախտակներ։ Պատերը վառարանների յախճապակեայ ձևի սպիտակ աղիւսից են։ 700 անձն կարող են ճաշել. հիանալի դահլիճ է, լուսաւոր և յատակն մաքուր և առանց որևիցէ հոտի։

Դահլիճի կողքին նոյնչափ ընդարձակ նեղ նրբանցք է և բոլոր պատի տարածութեամբ լուացարաններ են ջրի ծորակներով, իսկ միւս կողմում կախած են ալորուն սրբիչներ. աշակերտներ ճաշից առաջ և ճաշից յետոյ ձեռներ պիտի լուանան։ Մենք ներքև էինք, երբ մի աշակերտ մտաւ, բարձրացրեց թևերը, լուաց ձեռները, բերան, սրբեց և գընաց, և այս ամենն այն ձևով արեց, որ իսկոյն երևում էր բարեկիրթ պատանի։ Սեղանատանը կպած է խոհանոց, հիանալի ահագին և մաքուր երկար նրբանցքով և պատին կպած նոյնչափ երկար սեղանով, որի վրա գնում են ամաններ և սոքա հասնում են աշակերտներին նրբանցքի մէջ շինուած երկաթի վրա ալացող փոքրիկ կառքով, որը քանի մի յարկ ունի։ Սեղանատան մօտ կայ հացատուն, ամաններ լուանալու սենեակ, կաթնատուն, բանջարատուն, ձկնատուն, որտեղ ջրի մէջ ձկները մնում են քանի մի օր։

Խոհանոցային շինութիւնների վրայ մի կողմից երաժշտանոցներ են, 12 խցիկ, որտեղ կան դաշնակներ, ջութակներ։ Երբ ես շրջում էի, երկու աշակերտ դաշնակ նուագել էին սովորում, մի աշակերտ ջութակ։ Դռները փակ են և դռների մէջ երկու բոլորակ փոքր ապակիներ կան, որտեղից ամեն բան երևում է, և այսպէս են ամեն սենեակներում ամեն դռներ երկու ապակով։ Երաժշտանոցների մէջտեղ նրբանց կայ։ Միւս կողմից բաղանիք էր (կողպուած էր, չտեսայ)։ Աշակերտներն ամեն եօթնեակ երկու անգամ ասներ են լուանում և երկու անգամ լուացուում։ այսպիսի մանրակրկիտ մաքրութիւնն անհրաժեշտ է մանաւանդ գիշերօթիկ դպրոցում և մաքրութիւնն այնպիսի շռայլութիւն է, որ սմենեին դրամ չարժէ։

Բակի ծայրում կար առանձնացած հիւանդանոց, առանձին պարտէզիկով։

Երաժշտանոցի վրա բոլոր ուսուցիչների ժամանակ անցուցանելու վայելչասենեակներ կային. բիլիարդանոց, գարեջրանոց և ընթերցարան։ Երբ այնտեղ մտանք, ոմանք բիլիարդ էին խաղում, ոմանք գարեջուր էին խմում և ոմանք ընթերցարանում կարդում էին. ուսումնարանը 17 պարբերաթերթ է ստանում՝ ֆրանսերէն, անգլիերէն, գերմաներէն, իտալերէն։ Այս վայելչասենեակներն այն նպատակով են սահմանուած, որ ուսուցիչներն ամեն բան գպրոցում ունենան և ստիպուած չլինին հիւրանոցներ, ճաշարաններ, ընթերցարաններ գնալ, այլ ազատ ժամանակներն ևս դպրոցում գտնուել։ Այս հաստատութիւնը ոչ մի տեղ չկայ բացի Մոնժ ուսումնարանից։ Բոլոր ուսուցիչներն ուսումնարանի մէջ են նախաճաշում ի հարկէ։

Վերին յարկում հինգ ննջարան դահլիճներ կան, ընդարձակ, լուսաւոր, գաղով, երկու կողմից քնելու խցիկներ մարդաչափ տախտակամածով և փոքրիկ դռնով իւրաքանչիւր խցիկի մէջ։ Խցիկի դուռը փակուում է և աշակերտի մանելուց յետոյ խցիկը կողպում է գիշերապահը։ Գիշերապահը ժամը չորս անգամ անցնում է, եթէ աշակերտը կարիք ունի, գիշերապահին անցնելիս կասէ, և նա կբանայ դուռը և երբ աշակերտը կվերադառնայ, նոյնպէս կրկոդպէ։ Անրաքնոցը ննջարանի համար մօտ են (սենեակ և բոլորակ ատթոռ)։ Իւրաքանչիւր խցիկն ունի սեղան, մահճակալ, հայելի, փոքրիկ գորգ, առաջև մահճակալի գլխին տախտակամածի վրա դարսուած են օճառ, մաքրիչ, սպունգ, վրձին և այլն բաց, որպէս զի մեծաւորը անցնելիս տեսնէ, որ սպասաւորներ մաքրած են ամեն բան։ Դահլիճի մէջ բոլոր տարածութեամբ շատ գեղեցիկ ճենապակեայ լուացարան կայ. ուսուցիչներ կէս ժամ շարունակ հոսում է ջուրը, լցուած տաշտը շրջուում է և ջուրը թափուում է ներքև խողովակների մէջով գընում է. աշակերտների խցիկների համարների համեմատ են լուացարաններն ևս։ Դահլիճի ծայրում քնած է դատարարակը, որի մօտ կայ գաղի ծորակ։ Ննջարանի գազը կիսավառ է, գիշերը փոքրիկ ձայն լսելուն պէս

դասարակը իր մօտի ծորակով անմիջապէս կվառէ բոլոր գազերը։ Նոյն տեղ առանձին սենեակներում կան կօշկանոց, հանդերձատուն, հերմակեղէննոց՝ իւրաքանչիւր ննջարանի համար առանձին։

Քարտուղարի սենեակում կայ փարիզի քարտէզ և բոլոր աշակերտների ծնողների անները նշանակուած են իրանց փողոցներով, այնպէս որ այք ձգելուն պէս կտեսնէ որտեղ են բնակում։ Քարտուղարն իր սենեակում նոյնպէս հեռախօս (տէլէֆօն) ունի, որը կապուած է կենտրօնական հեռախօսատան հետ։ Ծնողներից ով որ կամենում է կրաժանորդագրուի այս հեռախօսատանը, վճարելով տարին 600 ֆրանկ և շատերը բաժանորդագրուած են, ծնողներ, գրավաճառներ, կառապաններ և այլն, և ով մինի հետ գործ ունի, կպատուիրէ հեռախօսատանը որ միացնեն այսինչ անձի հետ, կմիացնեն և կսկսեն անմիջական խօսակցութիւն շատ պարզ և հասկանալի ձևով։ Եւ այս վայելչութիւնն և յարմարութիւնն արժեն 600 ֆրանկ տարին։

Մօնժ ուսումնարանն օրինակելի, շատ մրխիթարական և չքնաղ երևոյթ է քաղաքակրթութեան և մանկավարժութեան մէջ. շնորհակալութիւն և պատիւ կառավարիչներին։ Ուսումնարանն ուսումնասիրելու համար շաբաթներ են հարկաւոր և ոչ թէ մի երկու օր։ Ես շատ և շատ գոհ եղայ, որ կարողացայ տեսնել և այստեղ, որ մասնաւոր դպրոց է, անհամեմատ աւելի պատրաստականութեամբ և յօժարութեամբ են ընդունում ինձ պէս այցելուներին և շրջեցնում՝ քան թէ տէրութեան դպրոցներում, որոնց թոյլտուութիւն լինում է տէրութիւնից։

Դասարաններն ընդարձակ են, բարձր, լուսաւոր և զարդարուն քարտէզներով, նկարներով և պատկերներով (բայց Բրիւսսէլի դասարաններին չեն հասնի)։ Սեղանները նստարանով մենաւոր են. (այսինքն ամեն մի աշակերտի համար առանձին), աջ ծայրում թանաքաման ամրացած։ Սեղանը գրքերի համար արկղիկ ունի և արկղիկի արտաքին կողմը ապակեայ է, որ ուսուցիչը, դասախարակն աչք ձգելուն պէս միշտ տեսնէ թէ ինչ ունի աշակերտն արկղիկում և թէ գրքերը կարգով են դասաւորուած։ Մտանք մի դասարան։ Բնական պատմութեան դաս էր։ Դասատուն կին էր։ Բոլոր աշակերտներն իսկոյն վերկացան, թողին նստարաններ, կանգնեցին իրանց նստարանների կողքին, ձեռները ծալած կրծքի վրա դրած և կանգնած էին բոլոր ժամանակ մինչև որ ծանուցանում էին իմ ով լինելս և ինձ աթոռ տուին։ Յետոյ ուսուցչուհին հրաւիրեց նստելու, նստեցան։ Մի աշակերտ (9 տարեկան) սկսեց պատմել դասը։ Ուսուցչուհին հարցեր էր առաջարկում, աշակերտը շատ գիտակցաբար էր պատասխանում։ Յետոյ ուսուցչուհին սկսեց նոր դաս մեկնել, և անմիջապէս իր մեկնածն հարցնել։ Աշակերտները վեր են կենում, ձեռները կուրծքին խաչաձև և պատասխանում են։ Եթէ չգիտէ, ուսուցչուհին կրկնում է, դարձեալ կրկնում է ամենայն քաղաքավարութեամբ և կարևոր բացատրութիւններով։ Ուսուցչուհին առաջ չէ գնում մինչև որ բոլոր աշակերտները չհասկանան, եթէ 5, 10 անգամ կրկնելու ստիպուած լինէր։ Ոչ ոք յետ պիտի չմնայ։ Այս կրտսեր դասարաններում խօսելով են ուսուցանում։ բարձր դասարաններում պրոֆէսօրները պատմելով են դասաւանդում և երբեմն հարցնում են։ Աշակերտները պատասխանում էին և խօսում էին առանց գոչելու, ծանր և ցած ձայնով։ Երբ ես դուրս էի գալիս դասարանից, աշակերտները մի ակնթարթում նոյնպէս վեր կացան, ձեռները ծալած կրծքին դրին և կանգնեցին իրանց տեղերի կողքին։ Համազգեստի ձևը սեաւ բաճկոն և սեաւ վարտիկ է։

Երկրորդ օրը դարձեալ գնացի Մօնժ ուսումնարան։ Իմ ներս մտած ժամին քանի մի հանրակաքերով աշակերտներն ուսումնարան եկան։ Հինգշաբթի օրերն զբօսանք է նշանակուած, այս տպուած է դասացուցա-

կում և իբրև մի պարտք։ Դիշերօթիկներին ուղարկում են զբօսնելու Բուա դը բուլօն անտառն կամ ուրիշ մի տեղ, և տպած ունենալով նշանաւոր տեղերի նկարագրութիւնը թերթիկների վրա, այն թերթիկները տալիս են աշակերտներին, որոնք գնալիս կարդում են և տեղագրութիւն սովորում miscere utite duici «վայելչականն օգտաւէտի հետ միացնել»։ Այն թերթիկներից քանի մի հատ ես վերցրի, ապագայում իբրև օրինակ ունենալու ճեմարանի մէջ։ Ազատ բոպէներից օգուտ քաղելով գնացի տեսնելու բաղանիք։ Երկար մաքուր տանց որևիցէ հոտի սենեակ, մէջտեղ քարէ յատակ մի գազաչափ լայնութեամբ փորած խողովակով։ Այս խողովակի մէջ երկու կողմից կան քառանկիւն տաշտիկներ և նստարան պատատակով (տաբուրէ)։ 24 նստարան մի կողմից, 24-ը միւս կողմից, 48 հատ։ Աշակերտները նստում են միմեանց հանդէպ և լուանում են ոտներ, ջուրը ծորակից է հոսում, յետոյ առանց վեր կենալու՝ նստած դառնում են, միւս կողմը պատրաստ սրբիչներ կան։ Նոյն տեղից մի երկու քայլի վրա երկու կողմերից տախտակամած խցիկներ կան ցած գռնով, խցիկների մէջ լողարաններ ծորակով, մի-մի աթոռ, մի կախարան։ Մեն խցիկ մի կողմից, մեն միւս կողմից, ուրեմն 18 աշակերտ միասին են լուացուում։

Երեք ժամին խօսարանի դասլիճում, որ թատերասրահի ձևով է, հաւաքուեցան աշակերտներ և ուսուցիչներ, մասնաւոր անձներ, մեն և ես քարտուղարը բազմոցի վրա նստեցրեց՝ վերատեսչի կողքին։ Վերատեսուչն սկսեց Մոլիէրի վրա խօսել բեմից, ասելով. Ցոգնել են արդէն կրկնելուց, յոգնել են կրկնելուց թէ Արիստիպը արդար է, Լուդովիկոս մեծ է, Բոսսիւէն նոյն իսկ պերճախօսութիւնն է, Սէվինիէն շնորհալի է և այլն։ Բայց մի բան որ կրկնելուց յոգնած չեն, այն է, որ Մոլիէրը աննման է։ Ընդհակառակն Ֆրանսացիներն սկսում են Մոլիէրին մի սեսակ պաշտօն մատուցանել, նոյնպէս, ինչպէս որ անգլիացիներն պաշտում են իրանց Շէկսպիրին։ Ցեսոյ համառօտ պատմեց Մոլիէրի կեանքը և Les Femmes saventes (Գիտուն կանայք) հատուածի մասին խօսելով ասաց՝ թէ Մոլիէրն այս գրած է իբրև արհեստ և ասում է թէ ինչպէս կրթելու է կանանց։ Զեզ, ասաց, այժմ ինչ խօսեմ կանանց կրթութեան մասին, օրիորդներ չունիք կրթելու, մենք ևս աղաներին ենք կրթում, բայց երբ ծնողներ կլինիք, ահա Մոլիէրի կարծիքը իմաստուն է, և կարդաց նորա հայեացքը կանանց կրթելու մասին՝ այսինքն կանանց պարտքերի մասին։ Երբ նա վերջացրեց, աշակերտներն սկսեցին ծափահարել, վարագոյրը իջեցրին։ Աշակերտները շարունակեցին ծափահարել այնքան, որ վարագոյրը բարձրացրին և վերատեսուչն դուրս եկաւ և գբլուխ տուաւ իր աշակերտներին և ուրիշներին։ Բայց գլխաւոր ժողովուրդը աշակերտներ էին և նա ինքն խօսելիս նոցա էր ուղղում խօսքը։ Այնուհետև դերասաններ ներկայացրին Կորնէյլի Սիննայից մի արարողութիւն և Մոլիէրի Femmes saventes ամբողջապէս։ Մի արարողութիւն լսելուց յետոյ՝ ես գնացի։ Կրկին մնայ դասարաններ. ամբողջ պատերը զարդարուած էին նկարներով, քարտէզներով, նշանաւոր անձերի պատկերներով, և ամեն դասարանի մէջ կան զանազան ժողովածուներ՝ հանքային, բոյսերի, հատիկների և այլն։ Ամեն բան այնպէս է բարեկարգուած, որ արդարև կրթութեան և առաջադիմութեան տուն լինի, ապա թէ ոչ, ինչպէս կարող է աշակերտն առաջադիմութեան և կատարելագործման ոգի ստանալ, երբ դպրոցն անբարեկարգութեան և մշտական թերութիւնների պատկեր է ներկայացնում։ Անբարեկարգ դպրոցն երբէք չէ կարող մարդիկ, ստեղծող մարդիկ արդիւնագործել։

ԽՈՐԻՆ Ծ. Վ. ՍՏԵՓԱՆԻ.

808-54